

1875


Georg Ritter von Gneisenau

Georg Ritter von Gneisenau

1896

200

291.71-93
4-79



ԶԵՐՄԱՆԱԼԻ

Ո Պ Գ

Բուսերէնից Թարգմ.

Օր. Ա. Ղրկիշանեանց:



2004

Տ Փ Խ Ա

Ճպարան Մ. Յարանիկի և Հ. Բեկ. Նիկ. 21.

Տիպ. Մ. Ռարաձե և Հ. Ք.

1896

Արդարքայի բարձրութեան
891.71-93
4-79
Ա. Կովկասով

Բարձրագույն
1896 մարտի 6-ի
Պ. Ջ. Վ.

ԶԵՐՄԱՆԱԼԻ ՈՐԴԻ

1009
4101



Տ Փ Խ Ի Ս
Ճպարան Մ. Շարադզե և Հ.
Տիպ. Մ. Շարադզե և Հ.
1896

5958

Дозволено цензурою Тифлисъ, 28 октября 1895 г.




ԶԱՐՄԱՆԱԼԻ ՈՐԴԻ

Փոքրիկ նուարդն և իր մայրն ապրում էին
քաղաքում։ Սրանք իրանց տան մօտ ու-
նէին մի գեղեցիկ փոքր պարտէզ։ Բացի շատ
տեսակ ծաղիկներից պարտիզում կային և մի
քանի պտղատու ծառեր՝ տանձի, կեռասի, ծի-
րանի և սև ու սպիտակ մատաղ թթենիք։
Նուարդը շատ էր սիրում թթենիքը, որովհետեւ
նրանց վրալի քաղցր թութը շուտ էր հաս-
նում։ Նրա սիրած թթենիքը ցածլիկ էին

և փոռած՝ այդ պատճառով էլ նա շատ հեշտ
էր հասնում պատղնեցին։ Տան մէջ ոչ ոք
չէր սիրում թութը, դրա համար էլ միայն
նուարդն էր օգտառում նրանից և քաղցրա-
ցնում իր բերանը։ Բայց ցաւն այն էր, որ
թթան հիւթը կեղտուում էր փոքրիկ աղջե-
կայ թէ ձեռքերը, թէ սպիտակ գոգնոցները
և թէ բաց գոյն շորերը, որի պատճառով էլ
մայրը միշտ բարկանում էր նրա վրայ։

Եւ ինչու անուշ չանէր, քանի որ այդ հա-
մեղ պտուղները այնքան մօտիկ էին կախուած,
որ քիչ էր մնում՝ իրանք ընկնէին նրա պստիկ
բերանը։ Ուստի նա մեծ ախորժակով բաց էր
անում իր բերանը և կուլ տալիս թթան հատիկ-
ները մէկը միւսի յետեից՝ մոռանալով որ պէտք
է մաքուր պահպանէ իր հագուստը։ Նուարդը
շատ էր սիրում զուգուել և շատ էր հաւանում
իր նոր գլխարկը, նա մանաւանդ վրայի վարդա-
գոյն ժապաւէնը, որով զարդարուած էր գըլ-
խարկը։ Երբ նա տեսաւ այն ժապաւէնը՝ միան-
գամայն զմայլեց և միշտ հարց ու փորձ էր
անում մօրը՝ թէ արդեօք որտեղից են ստա-


նում և ինչից են պատրաստում։ Մայրն ա-
սաց աղջկան, որ ժապաւէնը պատրաստում



են մետաքսից, իսկ մետաքսը տալիս է մեզ
շերամի որդը։ Պէտք էր տեսնել նուարդի ծիծա-
ղը։ Նա կարծեց թէ մայրը կատակէ անում՝ ու-
ղենալով գլխից հեռացնել իրան։ Այդ պատ-
ճառով էլ բան չհարցրեց, վազեց իր տի-
կինների մօտ։ Մայրը նկատեց, որ աղջիկը
չհաւատաց իր ասածին, բայց ոչինչ չասաց,
այլ մտքով մի բան անցկացրեց։

Գարնանալին տաք օրերից մէկն էր. Նուար-
դը հէնց ուզում էր գնալ պարտէզ վազվելու-
երը տեսաւ մօրը սենեակ մտնելիս. նա ձեռ-
քին մի կտոր թուղթ ունէր և նրա վրան մի
բան էր փռած: Ինչպէս առ հասարակ երե-
խաների մեծ մասն է լինում, մեր նուարդն էլ
հետաքրքրուող աղջիկ էր: Մի ըոպէ շան-
ցած՝ նա արդէն մօր կողքին կանգնած էր և
ուշադրութեամբ զննում էր այն թուղթը, որի
վրայ իլոկարծիքով մի քիչ խաշխաշ էր փռած:
— Ի՞նչ ես անելու այս խաշխաշը, մայ-
րիկ, հարցըց նա:

— Ապա լաւ նայիր, պատասխանեց մայ-
րը, դուցէ խաշխաշ չէ:



Իրաւ որ, նուարդը լաւ նայելուց յետոյ՝
նկատեց, որ սերմերը բոլորովին կլոր չէին, մէջ

տեղն ունէին մի փոքր փոս ընկած տեղ, որ
խաշխաշը վրայ չկայ:

— Ապա սա ի՞նչ բան է, հարցըց նա:

— Սրանք ձուիկներ են:

— Ո՛չ մայրիկ, դու ինձ հետ շարունակ
կատակ ես անում: Ես տեսել եմ շատ տեսակ
ձուիկներ. հաւերի, բաղերի և ուրիշ շատ թըռ-
չունների, բայց նրանք իսկի նման չեն սրանց:

— Նրա համար է քեզ ալպէս թւում, ո՛ր-
դիս, որովհետեւ դու տեսել ես թուչունների
ձուեր, բայց չես տեսել թիթեռներինը:

— Ի՞նչ ես ասում: Մի՞թէ թիթեռնիկներն
էլ են ձու ածում. նրանց ձուիկներից ի՞նչեր
են դուրս գալիս:

— Թէ ինչեր են դուրս գալիս, ինքդ կը
տեսնես: Բայց գեռ սրանց տանենք ապակեալ
վերնարահը և փոենք պատուհանի առաջ,
որպէս զի արել լաւ տաքացնէ:

Նուարդը հետեւց մօրը. մի անգամ էլ աչ-
քի անցկացրեց ձուիկները և ապա վազեց պար-
տէզը, որտեղի ծառերն արդէն սկսել էին
ծաղկել:

Արևն այնքան պայծառէր լուսաւորում,
և թուշուններն այնպէս սիրուն էին ծլւլում,
որ փոքրիկ աղջիկը չգիտէր թէ ուրախութիւ-
նից ինչ անի: Երկար ժամանակ վազվեց նա
պարտիզում, գնաց սրահը՝ ուր թուխսն իր՝ դե-
ղին ճուտերի հետ զբունում էր և տուն դար-
ձաւ միան այն ժամանակ, երբ չափից դուրս
յոդնել ու քաղցել էր: Դեռ չնախաճաշած,
նա լիշեց փոքրիկ ձուիկները և դգնաց տես-
նելու: Նրանք գեռ անշարժ թափուած էին
թղթի վրայ, միւնոյն դրութեան մէջ: Նուարդը
շատ էր հետաքրքրում, թէ ինչ պէտք է
դուրս գայ այն փոքրիկ սերմերից: Միւս ա-
դուրս գայ այն փոքրիկ սերմերից: Միւս ա-
դուրս գայ այն փոքրիկ սերմերից:



որ տեղեկանայ թէ ինչպէս են նրանք: Եւ ա-
հա թէ ինչ տեսաւ: Հենց որ մօտեցաւ պա-
տուհանին՝ իսկոյն նկատեց խիտ մազերով ծած-

կուած փոքրիկ սև որդեր: Նրանց մօտ թա-
փուած էին ձուիկների սպիտակ ու բարակ
կմեպները, որոնցից գուրս էին եկել որդերը:
Բայց դրանք բոլորը չէին:

Ձուիկների մի մասը թափուած էր ան-
շարժ, իսկ միւսներից որդերը կողքից ծակեր
բանալով սկսել էին դուրս գալ:

Նուարդը գեռ լաւ չգիտած՝ վազեց մօր
մօտ:

—Մայրիկ, մայրիկ, կանչեց նա ներս
վազելով սենեակը, արի վերև. տես թէ ին-
չե՞ր են դուրս եկել ձուիկներից: Նա մօր
ձեռքերը բռնեց ու տարաւ վերնասրահը:

—Գիտես մայրիկ, ես կարծում էի, որ
այս ձուիկներից փոքրիկ թիթեռնիկներ դուրս
կգան, բայց ահա այստեղ որդեր են երեսում:

—Համբերիր, գտորիկս, բանը թիթեռ-
նիկներին էլ կհասնի: Այժմ վազիր պար-
տէզը և պոկիր թթենու կանաչ, լաւ, թարմ
տերևներից: Դու հօ ճանաչում ես, չէ:

—Այո՛, ճանաչում եմ, ճանաչում. ինչի
են պէտք տերևները:

— Իսկոյն ինքդ կտեսնես, դէ՛ շուտ վազիր. չէ՞ որ թէ՛յը մեզ է սպասում:

Փոքրիկ աղջիկը գնաց ու շտապով յետ դարձաւ՝ ձեռքերը լի կանաչ, թարմ տերևներով։ Մայրը նրանցից մի քանի հատ վերցրեց և դարսեց որդերի կողքին։ Նրանք շատ շուտ իմացան տերևների հոտը, սողացին և սկսեցին եռանդով ուտել։ Նուարդին այս բունը շատ դուր եկաւ։

Նա մի գլուխ նրանց տակը թարմ տերևներ էր դարսում, այնպէս որ մայրը չէր կարողանում նրան տուն տանել թէլ խմեցնելու։ Երբ նրանք արդէն գնում էին՝ մայրն ասաց աղջկանը. «այժմ օրական մի քանի անգամ պէտք է որդերի համար թարմ տերևները բերես, Նուարդ։ Հօ մտահան չէս անիլ։

— Ոչ մայրիկ, չեմ մոռանալ, միամիտ կաց, ես այնպէս սրտով կպած եմ որդերիս, որ երբէք սոված չեն մնալ նրանք։

Նա ճշտութեամբ կատարեց իր խոստումը, և առաջին օրերը դեռ հարկաւոր եղածիցն էլ շատ էր բերում և ուրախանում, որ գոնեա



որդերը հաւանում են իր սիրած թթենու տերևներ։ Թէպէտ նա մեծ սիրով էր բաժանում որդերին թթենու տերևները, բայց հազիւթէ նոյնպիսի սիրով բաժանէր նրանց պտուղները, որոնք քիչ էր մնացել, որ հասնէին։ Նուարդը փորձեց ուրիշ ծառերի տերևներից բերել. բայց տեսաւ, որ թթենու տերևներից զատ ուրիշ բան չեն ուտում իր որդերը։ Թարմ տերևները մի քիչ հեռու էր դնում հին տերևներից։ Բոլոր որդերը սողալով անցնում էին թարմ տերևների վրայ. իսկ հների մնացորդ-

ները նա հաւաքում էր առանց անհանգիստ
անելու իր փոքրիկներին—այսպէս էր կոչում
նա որդերին, բայց մայրն ասաց, որ նրանք
թրթուրներ են կոչում:— Նուարդն այս-
պէս կերակրեց թրթուրներին հինգ օր: Նա
ուրիշ շատ գործեր էլ ունէր անելու. պար-
տիզում մարդերի ծաղիկներին պէտք է նա-
յը, տիկնիկներին դուրս տանէր զբօսնե-
լու, չը որ խեղճերն ամբողջ ձմեռը փակուած
էին ներսը: Բայց նա այս բոլորը մի կողմն
էր ձգում, հոգ տանելով մանր որդերի մասին,
որոնք յանձնուած էին իրան: Նուարդը լաւ
էր իմանում, որ եթէ նրանց չկերակրի, խեղ-
ճերը սոված կմնան, ուստի կանաչ տերե-
ներով լի զամբիւղը ձեռքին վազում էր նրանց
մօտ:

Որդերն այդ միջոցում շատակեր դարձան
ու շատ էլ մեծացան. նրանց մաշկը սևից շա-
գանակագոյնի փոխուեց, իսկ վեցերորդ օրուայ
դէմ նրանք ընկոյզի գոյն ստացան: Այդ օրն
առաւօտը նուարդն եկաւ նրանց մօտ և սաստիկ
վախեցաւ, երբ տեսաւ, որ որդերի մեծ մասը

գլխները ցցած՝ անշարժ լնկած, ոչինչ չէին
ուտում: Նա գնաց մօր մօտ ու արտասուքն
աչքերին ասաց:

—Ո՞չ, մայրիկ, կարծես թէ բոլոր որ-
դերս սատկել են. ափսոս, ի՞նչպէս էի նրանց
խնամում, հաւատած, մայրիկ, որ ոչ մի ան-
գամ առանց թարմ տերեների չեմ թողել:

Բայց մայրը որդերին նայելով՝ ասաց.

—Հանդարտուիր, դստրիկս, նրանք ա-
մենն էլ ողջ են և առողջ, միայն կամեցել են
քնել և ահա քնել են:

—Այդ ի՞նչպէս է, որ նրանք սկզբումն
ալդ ձեռվ չէին քնում:

—Գիտես, բանն ինչումն է. դու լիշում
ես, թէ դրանք որքան մանր էին և այս կարճ
միջոցում որչափ մեծացան: Քանի նրանք մեծա-
ցան, այնքան նեղացաւ նրանց վրայի շորը — մաշ-
կը. այժմ այնքան քնած կմնան որդերն այս մաշ-
կի տակ, մինչև դուրս կգալ մի նորը, եղած մաշկը
կտրաքուի և նրանք դուրս կպրծնեն նրա միջից:

Ուղիղ որ այդպէս էլ եղաւ. Նուարդը նոյն
օրը տեսաւ, որ որդերն սկսեցին պտտել գլխիկ-

Ները բարձրացրած։ Այդ միջոցին նրանց վրայի մաշկը տրաքտրաքուեց և նրանք իրանցից դէն



ձգեցին այդ։ Այսպէս նրանք գունափոխուեցին. մի ժամից յետոյ որդերն սկսեցին ուտել. բայց սկզբում քիչ էին ուտում։ Օրէցօր նրանք շատակեր էին դառնում։ Նրանց մաշկի գոյնը մոխրագոյն դարձաւ, իսկ վրայի մազերը համարեա թէ անյատացել էին։ Նրանք այնքան արագ էին մեծանում և այնչափ ուտում, որ Նուարդը զարմանքից մնացել էր ապշաճ։ Տարաբախտաբար նրա զամբիւղը մեծ չէր, այդ պատճառով ստիպուած էր շուտ շուտ տերևի ետեից վազելու։

Երբեմն շատ էլ յոգնում էր, բայց Նուարդն այնքան էր փափագում իմանալ թէ վերջն

բնչ է լինելու, որ առանց տրտունջի առաջ էր տանում իր գործը։ Հինգ օրից յետոյ որդերը դարձեալ քնեցին, բայց այս անգամ արդէն Նուարդը չկախեցաւ, այլ հասկացաւ, որ նրանք նորից փոխելու են իրանց զգեստը։ Ճիշտ որ սրանից յետոյ որդերը բաց մոխրագոյն դարձան, իսկ նրանց վրայի մազերը բոլորովին անյատացան։ Նրանք միգլուխ մեծանում էին, աւելի ճերմականում և շատակեր դառնում։ Նուարդը դադարեց նրանց «մանրիկներ» անուանելուց և շատ ուտելու պատճառով նրանց կոչում էր «շատակերներ»։ Պէտք է այս էլ ասած՝ որ նրանք արդէն սկսել էին փոքրիկ աղջկան ձանձրացնել. նա յաճախ ասում էր մօրը.

— Այսափ տերևներ բերում եմ, հաբերում, բայց սրանք ուտելուց չեն կշտանում։

— Սպասիր, հոգեակս, շուտով դրանք ուտելուց կդադարեն, այն ժամանակ դու մինոր հետաքրքիր բան կտեսնես։


Այժմ որդերն ալնպէս էին խոշորացել, որ կարելի էր նրանց լաւ դիտել։

Նուարդը նկատեց, որ նրանց ամբողջ մար-



մինը բաղկացած է տասը հատ օղակներից։ Նը-
րանք առջև ից ունէին երեք զոյտ ոտներ, իսկ
մէջտեղն ու յետեւը հինգ զոյտ, որոնք աւելի
հաստ էին և ծալրին աւլածե մազեր ունէին,
որոնցով կպչում էին տերեւներին։ Իններորդ
օղակի վերևից ցցուած էր մի փոքրիկ եղջիւր։

Վերջապէս թրթուրները մոմի պէս՝ թա-
փանցիկ դարձան։ Նրանք անհանգիստ էին երե-
ւում, բոլորն էլ գլխները պտտում էին և աշխա-
տում աւելի բարձր տեղ թառ լինել։ Մալրն
ասաց նուարդին, որ գնայ թթենու մի քա-
նի ճիւղեր բերի ու ցցի որդերի առաջը։ Որ-
դերը, որոնք մինչև այժմ միմիայն շարժւում
էին անցնելով կրծած տերեւից դէպի նորը՝
կարծես թէ զբօսնել ուզեցին։ Ահա ոստի
վրայով բարձրացաւ մի որդ, նրան հետեւց
երկրորդը, բարձրացան և ուրիշները. բոլորն



էլ կարծես դիտում էին ամեն մի ոստը՝ կանգ
առնելով և ընտրելով աւելի յարմար տեղ։
Ահա վերևն արդէն կանգ տառն և ուզում են
ինչ որ գործ սկսել։ Նրանք ոլորում են գըլխ-
ներն ամեն կողմն և մի քանի տեղ էլ դիպ-
չում են ոստերին։ Աւելի մօտիկից նայելով՝
նուարդը նկատեց, որ նրանք կպել են ոստերին
մի քանի բարակ ոստայնանման թելերով։
Թելերն աւելի ու աւելի շատանում էին և
թրթուրները կարծես թէ փաթաթւում էին



Նրանցով: Բայց որտեղից էին վերցնում թելերը: Մայրը պատմեց Նուարդին, որ այն թելերը գոյանում են նրանց մարմնի մէջ և դուրս են գալիս բերանից:

Նուարդն երկար ժամանակ զարմացած նայում էր, թէ ի՞նչպէս են թրթուրները գալարում, գլխները շարժում ու թելով փառթաթում, և չէր հասկանում թէ ինչո՞ւ համար են այդպէս անում:

Հետևեալ օրը նա այլ ևս թրթուրներ չտեսաւ. նրանց տեղը դեղին ձուաձեւ կծիկներ էին՝ աղաւնու ձուից մի քիչ մանր:

Այդ միջոցին վերնատուն մտաւ մայրը:

—Տես, մայրիկ, գոչեց աղջիկը, թրթուրներն այլ ևս չկան:

—Այն, դստրիկս, թրթուրները մնացել են իրանց հիւսած կծիկների մէջ. ահա այդ կծիկները կոչւում են բօժօժներ:

—Ինչո՞ւ են նրանք այնտեղ մտել և ի՞նչպէս պէտք է դուրս գան:

—Նրանք բօժօժների մէջ վերջին ան-

գամ կքնեն և ապա նրանց մաշկից գուրս կըդայ ոչ թէ թրթուր, այլ հարսնեակ:

—Հարսնեակ:

—Այն, ժպտալով ասաց մայրը:

—Ե՞րբ կտեսնեմ նրան:

—Նա կոկոնից երբէք չի դուրս գայ, իսկ եթէ դու սրտով ուզում ես նրան տեսնել՝ մենք մի՛հատը կկտրենք, բայց հիմա չէ, որովհետեւ թրթուրը դեռ ևս իր գործը չի վերջացըել:

Իսկ Նուարդի գործը վերջացել էր արդէն, այլ ևս ոչ ոքի չէր կերակրելու: Սկզբում թէւ նա ձանձրանում էր շուտ շուտ տերեներ բերելուց և նրանց մնացորդները հաւաքելուց, բայց այդ միջոցում այնչափ սիրել էր իր սանիկներին, որ հիմա տխրում էր առանց նրանց: Նուարդը գնում էր նայելու բօժօժներին և տեսնելով, որ նրանք անշարժ են, սարսափում էր, որ չինի թէ կոկոնների միջի թրթուրները սատկել ու փչացել են: Այժմ նրան միիթարում էին թթենու պտուղները, որ արդէն հասել էին: Նուարդն ինչպէս առաջ, այժմ էլ առանց նազ անելու քաղցրացնում



Էր իր բերանը համեղ պտուղներով:

Այսպէս ուրեմն մեր թթենիները ծառայեցին երկու նալատակի. մէկ որ կերակրեցին իրանց տերևներով որդերին և երկրորդ՝ իրանց քաղցր պտուղներով բաւականութիւն տուին նուարդին: Մի քանի օրից յետոյ մալրը վեր առաւ մի հատ կոկոն, կտրեց ու ցոլց տուեց նուարդին:

Փոքրիկ աղջիկը տեսաւ նրա մէջ մի նոր բան, որ բոլորովին նման չէր թրթուրի: Մա

մի փոքրիկ կինամոնագոյն բան էր՝ կազմուած մի քանի օղակներից ու գլխի նման բանից, բայց ոչ աչքեր ունէր և ոչ ոտներ: Նուարդը կար-



ծում էր, թէ մի գեղեցիկ բան կտեսնի. հարսնեակը բոլորովին դուր չեկաւ նրան: Մինչև անգամ նրան թուաց, թէ հարսնեակը շունչ չունի: Մի փոքր լութիւնից յետոյ նա հարցեց մօրը:

— Նրանք ինչ են շինում կոկոնի մէջ:

— Պէտք է քնած մնան կոկոնի մէջ, մինչև որ նրանց հետ մի արտասովոր բան պատահի: Բայց այդ բանի համար պէտք է դու մի առ ժամանակ սպասես:

Նուարդն արդէն սպասելուց ձանձրացել էր: Այս դէպքից յետոյ նա մի երկու անգամ

մտել էր վերնասրահը։ Մի անգամ էլ հէնց որ
դուռը բացեց, Նուարդի աչքովն ընկան մի
քանի սպիտակ թիթեռներ, որոնք պտտւում
էին պատուհանի գլխին։




— Սրանք ո՞րտե-
ղեց բսան, զար-
մանալով հարցըց
Նուարդը։

— Լաւ նայիր, պատասխա-
նեց մայրը, աղջկան տանելով
գէպի կոկոնները, — շատ կարելի է ինքդ էլ
հասկանաս։

Նուարդը նկատեց, որ մի քանի կոկոնների
վրայ ծակեր կան, իսկ մէջները գատարկ է։

— Միթէ այս տգեղ հարսնեակներիցն են
դուրս եկել այս գեղեցիկ թիթեռները, — բա-
ցականչեց նա։ — Բայց բնչպէս են դուրս եկել
այնտեղից։

— Նրանք իրանցից արձուկել են այնպիսի
մի կծու հիւթ, որից կոկոնի այն տեղն ալրուել է
և ծակ է գոյացել. ահա այն ծակից են դուրս
եկել թիթեռները։



Նուարդը մի քանի ժամանակ ուրախանում
էր նրանցով, իւտոյ առանց մի բառ արտասանելու
վաղեց պարտէզը։ Մի ըոպէից յետոյ նա դար-

ձաւ պարտիզից թիթենու տերևներով ու դարսեց թիթեռների առաջը:

Այս բանը տեսնելով մալրը ծիծաղեց և ասաց.

—Զուր ես աշխատել, հոգեակս. սրանք քո բերած տերևները չեն ուտիլ:

—Ապա ի՞նչ տամ սրանց, մալրիկ:

—Ոչ մի բան:

—Ի՞նչպէս թէ ոչ մի բան: Միթէ սրանք կարող են առանց կերակրի ապրել:

—Այո՛, սրանք ոչինչ չեն ուտում և դեռ երկար ժամանակ չեն ուտի:

Հետևեալ օրը նուարդը տեսաւ պատուհանի առաջ դրած թղթի վրայ շատ փոքրիկ մոխրագոյն ձուիկներ հենց այն տեսակ, որպիսին երից դուրս էին եկել որդերը. թիթեռները երեք օր ձու ածելուց յետով՝ սատկեցին: Նուարդը շատ էր ցաւում նրանց համար, բայց ի՞նչ կարող էր անել: Նա հաւաքեց բոլոր ձուիկներն ու կոկոնները, տարաւ մօր մօտ ու հարցըց.

—Այս ձուիկներից էլ նոյնպիսի որդեր դուրս կդան:



—Այո՛, բայց ոչ հիմա, այլ առաջիկայ տարուայ գարնանը: Եթէ դրանց պահես չոր ու սառը տեղ, դու կունենաս թէ թրթուրներ և թէ թիթեռներ:

—Իսկ կոկոններն ի՞նչ պէտք է անենք:

—Դու կարող ես այդ կոկոններն ընծայել քո բոլոր ծանօթներին և պատմել, թէ որտեղից են դրանք ստացուել: Իսկ եթէ մենք

այդ տեսակներից շատ ունենալինք, այն ժամանակ գործարան կհիմնէինք և սրանից ժապաւէններ, թաւիշ և ուրիշ շատ տեսակ մետաքսեալ կտորներ կպատրաստէինք:

— Ի՞նչ ես ասում, մայրիկ, այդ ամենն ինչպէս կանէինք:

— Այ, լսիր թէ ինչպէս են անում այդ գործարաններում. երբ թըթուրները կոկոններ են հիւսում և կոկոնների մէջ գոյանում են հարսնեակներ, այն ժամանակ կոկոնները հաւաքում, դարսում են տաք վառարանի մէջ:

— Ոհ, մայրիկ, չէ՞ որ հարսնեակները նըրանց մէջ կստկուն:

— Իհարկէ, հէնց դրա համար էլ դնում են վառարանը:


— Այն ժամանակ այլ ևս թիթեռներ չեն լինիլ, տխուր դէմքով ասաց Նուարդը:

— Թիթեռները կոկոններից դուրս գալիս փչացնում են կոկոնները, որովհետեւ այն ծակը, որ շինում են նրանք դուրս գալու համար՝ կտրատում է թելերը: Սակայն կոկոնների մի մասը թողնում են, որ նրանցից

թիթեռներ դուրս գան և ձու ածեն յաջորդ տարուայ որդերի համար: Բօժօժները վառարանից հանելուց յետոյ ձգում են կէծ զրի մէջ:

— Իսկ այդ ինչու համար են անում:

— Զէ՞ որ ամեն մի կոկոն հիւսուած է կէս կամ երբեմն էլ մի վերստ երկայն մետաքսեալ թելից: Այդ թելի շարքերն իրար կպած են սոսինձով: Կէծ զրի մէջ այդ սոսին:





ձը բացւում է և այն ժամանակ կարելի է բոլոր թելլը յետ տալ: Դրա համար աւելով

ալէսպիս ու օգտաւէտ առարկաներ էլ պատ-
րաստուած են հէնց նրանից։ Այժմ կարող
եռ պատմել ընկերուհիներիդ, թէ ինչպէս քո
գործարանում մետաքս պատրաստեցին քեզ
համար քո փոքրիկ բանուորները — շերամի
որդերը։

խփում են կոկոններին. վերևի թելերը կըպ-
չում են աւլին և ալդպիսով գտնում են
երկու կամ մի քանի կոկոնների ծայրերը
և հաւաքելով՝ փաթաթում են ճախարակի
վրայ։ Իսկ որովհետև այն թելերը շատ բարակ
են լինում՝ մի քանիսը միասին են ոլորում
կամ մանում։ Հէնց այս թելերիցն է, որ ոս-
տայնի վրայ զանազան կտորներ են գործում։
— Ա՛խ, մայրիկ, որչափ զարմանալի են իմ
որդերը։ Ուրեմն դու հանաք չէիր անում ինձ
հետ, երբ ասում էիր թէ ժապաւէնը պատ-
րաստած է շերամի թելից։ Հապա իմ մետաք-
սեալ թաշկինակը, քո մետաքսեալ ձեռնոցնե-
րը։ նրանք էլ են դրանից պատրաստուած։
— Այո՛, սիրելիս, նրանք էլ, և ուրիշ շատ







12x5

ԳԻՆՆ Է 10 ԿՈՂԵԿ

0005515

2013



